

այդ երգն է ստեղծել, ոչ թե իր անձնական երգը:

Երկրի շունչը դարերով, ժամանակներով է կուտակվում մարդու մեջ: Կոմիտասը այդ շնչով մարմնացած էակ է, և նրա ուժը դրա մեջ է, այդտեղից էլ պետք է հասկանալ նրան:

Կոմիտասը, անշուշտ, և՛ ազգային է, և՛ համամարդկային: Այդ երկուսը իրարից անջատել չի կարելի: Կոմիտասին մենք սպելի ենք զգում, որովհետև մեր մեջ մեր երկրի ու գին ավելի հարազատ ենք զգում: Աշխարհը արդյոք ճանաչո՞ւմ է Կոմիտասին. ուսումնասիրե՞լ է, լսո՞ւմ է, ինչպես Բախին, Ժոմանին, Վերդիին...

Հայերս մեր անցած պատմությամբ ու մշակույթով նման ենք մի ճամփորդի, որը

շատ ճամփորդների նման, փոխանակ գնացքով գնալու, գնացքի հետ վազել է: Ու չեն էլ մտածել, թե ինչո՞ւ այս ճամփորդը ետ չի մնում: Լույսին գնալու, լույսին հասնելու ձգտում է սա: Ժողովուրդը հաստատել է երկրագնդի մեծ օրենքը՝ միշտ արևի ունի մնալու օրենքը:

Կոմիտասը այնպես է երգում, կարծես շոշափում է հողը: Կարծես երգողը իրական մարդ չէ: Նա Պատարագ է ստեղծել: Պատարագը մեր ժողովրդական ոգու խոսքն է: Մենք դեռ լրիվ չենք հասկանում Կոմիտասին: Նրա մեծությունը իր մեջ է: Նա հայտնաբերել է մեր երաժշտության պարզեցումը: Մի օր էլ ինքը պիտի հայտնաբերվի իր բոլոր գաղտնիքներով:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԶՎԱՐԹՆՈՅԸ

Այս երգը, որ հնչում է մեր ականջին, մեզ է հասել ոչ թե մի քանի տասնյակ տարիների հեռավորությունից, այլ դարերի խորքից: Հասել է ինչպես հազարամյակներ հողում թաղված կավե սափորն է պեղումներից հետո ելնում արևերես, և կամ հնամյա որմնանկարն է դարերի սվաղը քերելուց հետո՝ իր հրաշալի սկզբնապատկերով հայտնվում աշխարհին:

Հին է մեր երկիրը, ու մեր ժողովուրդն էլ հնուց ի վեր սիրել է կառուցել, ստեղծել, երգել: Սակայն ժամանակն ու՝ այլազան ցեղերի արշավանքներն ու գրավումները քանդել են ո՛չ միայն մեր մայրաքաղաքներն ու տաճարները, ավերումների ծուխ ու փոշով պատել են ո՛չ միայն մեր զարդաքանդակները ու մագաղաթները, այլև մեր երգն ու երաժշտությունը՝ օտարամուտ ձայնարկու-

թյունների տակ խեղդվելով մեր հորովելաշունչ մեղեդիները:

Եվ Կոմիտասն էր, հազվադեպ այն հնաբանը, որ ժամանակի շերտերի տակից լույս աշխարհ հանեց ոչ թե քարե խոյակն ու սյունաշարը, կավե սափորը և կամ մետաղյա զարդերը, այլ հնչյունը, մեղեդին:

Հայ երաժշտության Թորամանյանն է Կոմիտասը, ու նրա թողածը՝ հայ երաժշտության Զվարթնոցը, այս դեպքում արդեն ոչ բեկոր-բեկոր ու մասնատված, այլ վերաշարված ու ամբողջական վերածնված՝ նախնական իր ողջ գեղեցկությամբ ու ամբողջականությամբ:

Թող հավերժ դողանցեն այդ սրբազան տաճարի զանգերը՝ մշտապես ավետելով աշխարհին կյանքի և ստեղծումի հաղթանակը՝ ընդդեմ մահվան ու քանդումի:

